



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

28.11.2018թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿ

Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի նպատակ	Սպառողական
Տարեկան տոկոսադրույք*	14-18%՝ առանց եկամուտների վերլուծության 14-15%՝ եկամուտների վերլուծությամբ
Նվազագույն ժամկետ	3 տարի
Առավելագույն ժամկետ	8 տարի
Վարկի նվազագույն գումար	800 000 ՀՀ դրամ՝ վարկառուի մոտ վարկային պատմության առկայության դեպքում, 1 600 000 ՀՀ դրամ՝ վարկառուի մոտ վարկային պատմության բացակայության դեպքում
Վարկի առավելագույն գումար	40 000 000 ՀՀ դրամ
Տարեկան փաստացի տոկոսադրույք	15.2 - 24% ¹
	<i>¹ Երրորդ անձնաց կապարվող վճարումներով պայմանավորված՝ փաստացի տոկոսադրույքը կարող է ավելի բարձր լինել</i>
Վարկի և տոկոսագումարի մարումներ	1. վարկի և տոկոսագումարի հանրագումարի ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ) 2. վարկի արտոնյալ ժամանակահատվածում միայն տոկոսագումարների ամենամսյա մարումներ, արտոնյալ ժամանակահատվածի ավարտից հետո՝ վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ)
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	6 000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	վարկի գումարի 0.5%, նվազագույնը 60,000 ՀՀ դրամ
Վարկառուին ներկայացվող պահանջներ	
Վարկառուի տարիքային սահմանափակում	21 տարին լրացած ՀՀ-ում բնակվող ֆիզիկական անձ, որի տարիքը մինչև վարկի մարումը չի գերազանցում 65 տարին
Գրավի առարկային ներկայացվող պահանջներ և պայմաններ	
Գրավի առարկա անշարժ գույք*	գրավ կարող է հանդիսանալ բնակելի և հասարակական նշանակության անշարժ գույք
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	75%
Որոշման կայացման ժամկետներ, գործոններ	
Որոշման կայացման ժամկետ	առավելագույնը 3 օր
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	1 օր
Տրամադրման ժամկետ	1 աշխատանքային օր՝ գրավի պայմանագիրը նոտարական վավերացում և գրավը կադաստրային գրանցում ստանալուց հետո

«Արդշինբանկ» ՓԲԸ
 Հայաստան, 0015, Երևան,
 Գր. Լուսավորչի փող., 13
 Հեռ. (+374-12) 222222
 e-mail: office@ardshinbank.am
 URL: www.ardshinbank.am

Դրական որոշման գործոններ	հաճախորդի/ամուսնու և գրավատուների վարկարժանության բավարար մակարդակ և գրավադրվող գույքի բնութագրիչների համապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին
Վարկի մերժման գործոններ	հաճախորդի/ամուսնու և գրավատուների վարկարժանության ոչ բավարար մակարդակ և/կամ գրավադրվող գույքի բնութագրիչների անհամապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին
Կարևոր է իմանալ	
Վարկառուն իրավունք ունի կատարելու վարկային պարտավորությունների ամբողջական կամ մասնակի վաղաժամկետ մարում:	
Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վարկառուն կարող է զրկվել ձեռք բերվող և գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:	
Գրավադրվող անշարժ գույքի գնահատումն իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող անկախ ընկերությունների կողմից, որոնց մասին տեղեկատվությունը հրապարակվում է Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում:	
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում:	

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ
 Ձեր ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

Ձեր ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉԿՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ
 Ձեր ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ